«Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա համար

Բովանդակություն

Կոմպիլյացիա իրականացնողի զեկույց	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

Կազմակերպության գտնվելու վայրը	Կոտայքի մարզ, Հրազդան Գործարանային փող., 1 շենք
Իրավական ձևը	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը	Ցեմենտի արտադրություն
Սնանկության կառավարիչ	Արամ Խաչատրյան

«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/2, 12-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 11 96 77 77

"IFP" LLC
49/2 Komitas st. 12th floor., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 11 96 77 77

Կոմպիլյացիա իրականացնողի զեկույց

«Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊ Ընկերության ղեկավարությանը

Մենք պատրաստել ենք «Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊ Ընկերությանը կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ձեր կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մենք իրականացրել ենք սույն կոմպիլյացիայի առաջադրանքը «Կոմպիլյացիայի առաջադրանքներ» Հարակից ծառայությունների միջազգային ստանդարտին 4410-ին (Վերանայված) համապատասխան:

Մենք կիրառել ենք հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման մեր ունեցած մասնագիտական փորձառությունը՝ օժանդակելու համար Ձեզ «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին» (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման գործում: Մենք պահպանել ենք էթիկայի համապատասխան պահանջները՝ ներառյալ ազնվության, օբյեկտիվության, մասնագիտական կարողության և պատշաճ վերաբերմունքի սկզբունքները:

Այս ֆինանսական հաշվետվությունները և դրանք պատրաստելու համար օգտագործված տեղեկատվության ճշգրտությունն ու ամբողջականությունը ձեր պատասխանատվության ներքո են:

Քանի որ կոմպիլյացիայի առաջադրանքը հավաստացման առաջադրանք չէ, մեզից չի պահանջվում ստուգել այս հաշվետվությունների կազմման նպատակով Ձեր կողմից մեզ տրամադրված տեղեկատվության ճշգրտությունը կամ ամբողջականությունը: Հետևաբար, մենք չենք արտահայտում աուդիտորական կարծիք կամ դիտարկման եզրակացություն առ այն, թե արդյոք այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան:

«Այ Էֆ Փի» ՍՊԸ

Տնօրեն Աշոտ Բարսեղյան

28.08.2026թ.

« Հրազդան ցեմենտ քորփորեյշն » ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ակտիվներ		հազ. դրամ	հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
		-	-
Ընթացիկ ակտիվներ			
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	5	2,098,920	2,319,448
Պաշարներ	6	999,619	1,148,703
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	6,239,670	6,263,674
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	7	109,044
Այլ ակտիվներ		4,245	4,245
		9,342,461	9,845,114
Ընդամենը ակտիվներ		9,342,461	9,845,114
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		80,000	80,000
Կուտակված շահույթ		(9,641,509)	(8,596,711)
		(9,561,509)	(8,516,711)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	15,870,487	15,870,487
		15,870,487	15,870,487
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	9	1,036,642	1,036,642
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	1,996,841	1,454,696
		3,033,483	2,491,338
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		9,342,461	9,845,114

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. Օգոստոսի 28-ին:

Արամ Խաչատրյան
Սնանկության կառավարիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 7-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

« Հրազդան ցեմենտ քորփորեյշն » ՍՊԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական
արդյունքի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2025թ.	2024թ.
		հազ. դրամ	հազ. դրամ
Հասույթ	11	50,582	1,443,175
Վաճառքի ինքնարժեք	12	(144,502)	(1,705,202)
Համախառն շահույթ		(93,920)	(262,027)
Իրացման ծախսեր	13	(18,361)	(162,149)
Վարչական ծախսեր	14	(136,538)	(258,144)
Գործառնական այլ ծախսեր	15	(795,979)	(83,645)
Գործառնական այլ եկամուտներ		-	299
Գործառնական շահույթ		(1,044,798)	(765,666)
Անհատույց տված պաշարներ		-	(13,431)
Շահույթ մինչև հարկումը		(1,044,798)	(779,097)
Շահութահարկի գծով ծախս		-	-
Զուտ շահույթ		(1,044,798)	(779,097)
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		(1,044,798)	(779,097)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 7-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

« Հրազդան ցեմենտ քորփորեյշն » ՍՊԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2024թ.	80,000	(7,817,614)	(7,737,614)
Տարվա շահույթ	-	(779,097)	(779,097)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	80,000	(8,596,711)	(8,516,711)
Տարվա շահույթ	-	(1,044,798)	(1,044,798)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	80,000	(9,641,509)	(9,561,509)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող 7-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

« Հրազդան ցեմենտ քորփորեյշն » ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Իրացումից մուտքեր	53,214	654,298
Վճարումներ մատակարարներին	(40,322)	(145,727)
Վճարումներ աշխատակիցներին	(90,184)	(205,484)
Վճարումներ սնանկության կառավարչին	(7,432)	(11,441)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(24,065)	(181,556)
Այլ ծախսեր	(248)	(1,046)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը	(109,037)	109,044
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	(109,037)	109,044
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական զուտ հոսքեր	(109,037)	109,044
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	109,044	0
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	7	109,044

Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հրազդան ցեմենտ քորփարեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է: Ընկերության կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2017թ.-ի դեկտեմբերի 19-ին, գրանցման համար՝ 85.110.998344: Ընկերության իրավաբանական հասցեն՝ է ՀՀ, Կոտայքի մարզ, Հրազդան Գործարանային փող., 1 շենք: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 03022523:

Ընկերության հիմնական գործունեությունն է ցեմենտի արտադրությունը: ՀՀ Սնանկության դատարանի 30.11.2022թ. վճռով թիվ ՍնԴ/1288/04/22 գործով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: ՀՀ սնանկության դատարանի 23.04.2024 թվականի որոշմամբ «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊ ընկերության նկատմամբ սկսվել է պարտապանի լուծարման վարույթ՝ հիմք ընդունելով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու հանգամանքը: Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 388 մարդ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 400 մարդ):

Ընկերության կանոնադրական կապիտալը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 80,000,000 (Ութսուն միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության մասնակիցը և վերջնական վերահսկող կողմն է՝

Մասնակցի անուն	Բաժնեմասերի արժեք	Բաժնեմասի տոկոսը
«Ջի էմ հոլդինգ» ՍՊԸ	80,000,000	100%
	80,000,000	100%

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:

Շարունակական ռազմական հակամարտությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև, որոնց ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում էր հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

1. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 2-ում:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայաստանի Հանրապետության դրամական միավորով (ՀՀ դրամ), որը նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով (հազ. դրամ):

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

ՀՀ Սևանկության դատարանի 30.11.2022թ. վճռով թիվ ՍՆԴ/1288/04/22 գործով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Հաշվի առնելով Ընկերության սնանկության և լուծարման գործընթացում գտնվելու հանգամանքը՝ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստվել գործունեության անընդհատության հիմունքով:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն հիմունքով, որ Ընկերությունը չի շարունակելու իր գործունեությունը: Ակտիվների և պարտավորությունների չափումը և ներկայացումը կատարվել են՝ հաշվի առնելով Ընկերության լուծարման գործընթացը և համապատասխան ակտիվների ու պարտավորությունների նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջները:

Նախկինում կիրառված հաշվապահական քաղաքականությունները և գնահատման մոտեցումները վերանայվել են այնքանով, որքանով անհրաժեշտ է եղել ֆինանսական հաշվետվությունները գործունեության անընդհատության հիմունքով չպատրաստելու հանգամանքը արտացոլելու և կիրառելի հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխանելու համար:

Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ

ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման համար, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2025թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) ՖՀՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Ընկերությունը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Ընկերությունը նաև գնահատում է ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

(բ) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրեր (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ):

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Ենթադրությունների և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:
Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների զուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց զուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության ակնկալիքների վրա:

Իրական արժեքի չափում

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ակտիվների և պարտավորությունների՝ լուծարային կամ իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման համապատասխան մեթոդներ՝ հաշվի առնելով անանկության գործընթացի հատուկ պայմանները և հարկադիր իրացման հնարավորությունները: Գնահատված արժեքները կարող են տարբերվել փաստացի ձեռքբերման կամ մարման գներից:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերի գնահատման ժամանակ ղեկավարությունը գնահատում է դրանց հավաքագրման հավանականությունը՝ հաշվի առնելով պարտապանների ֆինանսական վիճակը, պարտքերի ժամկետանցության ժամկետները, առկա պայմանագրային և իրավական իրավունքները, նախկինում իրականացված հավաքագրումները և ակնկալվող դրամական մուտքերը:

Լուծարման գործընթացի պայմաններում հատուկ ուշադրություն է դարձվում այն գումարներին, որոնց հավաքագրումը կարող է կախված լինել դատական, սնանկության կամ այլ իրավական գործընթացների արդյունքից

4. **Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում**

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(i) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր
- Ստացված վարկեր և փոխառություններ

(ii) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	Ծնթ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	7	581,989	581,993
Մասնագիտացված կազմակերպությունների կողմից կառավարվող պարտքեր	7	5,531,875	5,531,875
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	7	109,044
Ընդամենը		6,113,871	6,222,912

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

	Ծնթ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ստացված վարկեր և փոխառություններ	9	16,907,129	16,907,129
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10	702,075	726,265
Ընդամենը		17,609,204	17,633,394

(iii) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային կրեդիտորական պարտքերը, ստացված փոխառությունները, վարկերը:

Դրամական միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները գնահատվել են հնարավոր մարման կամ իրացման ենթակա գումարներով՝ հաշվի առնելով սնանկության գործընթացի պահանջները:

Ծանոթագրություն 20-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի, փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության ընդհանուր կառավարումն ու գույքի տնօրինումը, հաշվի առնելով ՀՀ դատարանի վճիռը, իրականացվում է սնանկության գործով կառավարչի կողմից՝ ՀՀ «Սնանկության մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ նպատակ ունենալով առավելագույնս արդյունավետ իրացնել ակտիվները և հնարավորության սահմաններում բավարարել պարտատերերի պահանջների հերթականությունը:

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Քանի որ Ընկերության հիմնական գործունեությունը դադարեցված է, պարտքային ռիսկը հիմնականում բխում է նախկինում առաջացած առևտրային դեբիտորական պարտքերից, ինչպես նաև դրամական միջոցներից ու դրանց համարժեքներից:

Ընկերության սնանկության գործընթացում առկա դեբիտորական պարտքերի հավաքագրումն իրականացվում է սնանկության կառավարչի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Անհուսալի կամ չհավաքագրվող պարտքերի գծով կատարվում են համապատասխան արժեզրկման ճշգրտումներ:

Առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին սահմանափակվում է վերը ներկայացված ֆինանսական ակտիվների մնացորդներով (ii) ֆինանսական գործիքներ կատեգորիաներով):

Պարտքային ռիսկի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը սահմանափակվում է Ընկերության վերոհիշյալ ֆինանսական ակտիվներով:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով: Հաշվի առնելով գործունեության դադարեցումը՝ նոր արտարժութային գործառնություններ չեն իրականացվում, և արտարժութային ռիսկը սահմանափակվում է միայն նախկինում ձևավորված և դեռևս չմարված արտարժութային ակտիվների ու պարտավորությունների մնացորդներով:

- *արտարժութային ռիսկ*

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով, այսինքն՝ երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ընկերության՝ արտարժույթով գնանշված դրամական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջում հետևյալն են՝

2025թ. դեկտեմբերի 31 հազ. դրամ	ՌԴ ռուբլի	Ընդամենը
Պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(18,458)	(18,458)
Զուտ դիրք	**(18,458)**	**(18,458)**

2024թ. դեկտեմբերի 31 հազ. դրամ	ՌԴ ռուբլի	Ընդամենը
Պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(14,058)	(14,058)
Զուտ դիրք	**(14,058)**	**(14,058)**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքների՝ ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի 10% արժևորման նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով (ԱՄԷ դիրհամ ազդեցությունը ոչ էական է, մնացորդների ոչ նշանակալի լինելով պայմանավորված):

	Ռուբլու ազդեցություն	
	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս մինչև հարկումը	1,846	1,406
Ընդամենը	**1,846**	**1,406**

Փոխարժեքների՝ ԱՄՆ դոլար, եվրո և ՌԴ ռուբլի, 10% անկումը կհանգեցնի հակառակ ազդեցության:

- *տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն:

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար

Ընկերությունը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները չի հաշվառում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն Ընկերության դեպքում կապված է ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու անհնարինության և գործունեության ամբողջական դադարեցման հետ:
Ընկերության պարտավորությունների մարումն ու իրացվելիության կառավարումն իրականացվում են բացառապես ՀՀ «Մնանկության մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ սնանկության կառավարչի կողմից ակտիվների հարկադիր իրացումից ստացված միջոցների հաշվին՝ պարտատերերի պահանջների օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան:

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերության կապիտալը բաղկացած է սեփական կապիտալից (ներառյալ կանոնադրական կապիտալը և չբաշխված վնասը/կուտակված վնասը) և պարտքային միջոցներից:
Սնանկության գործընթացում կապիտալի և պարտավորությունների կառուցվածքի գնահատումն իրականացվում է բացառապես պարտատերերի պահանջների բավարարման և ակտիվների լուծարային արժեքների որոշման համատեքստում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

5. Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Հիմնական միջոցներ	2,045,604	2,241,524
Ոչ նյութական ակտիվներ	53,316	77,924
Ընդամենը	**2,098,920**	**2,319,448**

6. Պաշարներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Նյութեր	768,752	768,752
Արագամաշ առարկաներ	15,073	15,074
Անավարտ արտադրություն	31,298	31,298
Արտադրանք	184,496	333,579
	999,619	**1,148,703**

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	581,989	581,993
Տրված կանխավճարներ	125,196	149,196
Մասնագիտացված կազմակերպությունների կողմից կառավարվող պարտքեր	5,531,875	5,531,875
Այլ դեբիտորական պարտքեր	610	610
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,239,670	6,263,674

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում – ՀՀ դրամով	7	109,044
	7	109,044

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ, գտնվում են ՀՀ վստահելի, Fitch BB- և Moody's Ba3 վարկանիշ ունեցող առևտրային բանկերում:

9. Ստացված վարկեր և փոխառություններ

Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի թվով տասներկու գլխավոր/հիմնական վարկային պայմանագրեր ՀՀ առևտրային բանկերից, որոնց համար ապահովության միջոցներ են հանդիսանում ընկերության հիմնական, շրջանառու միջոցներ, վարկերի միջին տոկոսադրույքը 10% է:

10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	702,075	726,265
Ստացված կանխավճարներ	3,183	3,183
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	553,023	424,620
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	716,575	289,195
Այլ պարտավորություններ	21,985	11,391
	1,996,841	1,454,696

11. Հասույթ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Արտադրանքի վաճառքից	50,582	1,443,175
	50,582	1,443,175

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև՝

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող արտադրանք	50,582	1,443,175
	50,582	1,443,175

Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում արտադրանքի նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Արտադրանքի/ ապրանքի տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականություն
Ցեմենտի արտադրություն	Հաճախորդներն արտադրանքի նկատմամբ հսկողությունը ձեռք են բերում, երբ արտադրանքն առաքվում է նշված վայր կամ ուղարկվում է Ընկերության պահեստից՝ հաշիվների համաձայն: Հաշիվները դուրս են գրվում ժամանակի որոշակի պահին:	Հասույթը ճանաչվում է, երբ արտադրանքն առաքվում է նշված վայր կամ ուղարկվում է նշված վայրից՝ հաշիվների համաձայն:

12. Վաճառքի ինքնարժեք

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հումք	30,812	363,597
Օժանդակ նյութեր	8,315	98,127
Էներգետիկ ծախսեր	72,324	853,467
Հիմնական միջոցների մաշվածություն	5,407	63,805
Աշխատավարձ	24,305	286,815
Պահեստամասեր	3,339	39,391
	144,502	**1,705,202**

13. Իրացման ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատավարձ	9,649	85,212
Հիմնական միջոցների մաշվածություն	1,079	9,529
Էլեկտրաէներգիա և այլ ծախսեր	7,633	67,408
	18,361	162,149

14. Վարչական ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատավարձ	126,776	239,688
Հիմնական միջոցների մաշվածություն	5,021	9,493
Վառելիք	562	1,063
Էլեկտրաէներգիա	3,896	7,366
Վարչական այլ ծախսեր	283	534
	136,538	258,144

15. Գործառնական այլ ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատավարձ	579,475	60,894
Հիմնական միջոցների մաշվածություն	214,612	22,552
Այլ ծախսեր	1,892	199
	795,979	83,645

16. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Առևտրային գործարքներ
Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ առևտրային գործարքները.

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատավարձ և պարգևատրումներ	24,600	24,600

Մնացորդներ	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Տրված փոխառություն	1,505	1,505

17. Կապիտալ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 80,000,000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ:

18. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հասույթի ճանաչում հաճախորդների հետ պայմանագրերից
Ընկերության եկամտի գերակշիռ մասը ստացվում է արտադրանքի վաճառքից որը ճանաչվում է այն պահին, երբ արտադրանքի, ապրանքների վերահսկողությունը փոխանցվել է հաճախորդին: Սա հիմնականում այն դեպքում, երբ արտադրանք առաքվում է հաճախորդին: Անհրաժեշտ է սահմանափակ դատողություն վերահսկողության փոխանցումն անցնելու վերաբերյալ: Երբ տեղի է ունենում արտադրանքի ֆիզիկական մատակարարումը պայմանավորված վայր, Ընկերությունն այլևս ֆիզիկական տիրապետում չի ունենում, այլ սովորաբար ունենում է վճարման ներկա իրավունք և չի պահպանում քննարկվող ապրանքների նշանակալի ռիսկեր և օգուտներ:
Արտարժույթով գործարքներ
Ընկերության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին՝ ԱՄՆ դոլար 381.36 ՀՀ դրամ, եվրո 449.01 ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի 4.8711 ՀՀ դրամ (2024թ.

տարեվերջի դրությամբ ԱՄՆ դոլար 396.56 ՀՀ դրամ, եվրո 413,89 ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի 3.71 ՀՀ դրամ):

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),

գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված ինքնարժեքով չափված, եթե այն համապատասխանում է հետևյալ երկու պայմաններին և չի որոշվել, որ չափվում է ԻԱՇԿՎ-ով.

- այն իրականացվում է որպես բիզնես մոդելի մաս, որի նպատակն է ակտիվներ պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, ինչպես նաեւ
- դրա պայմանագրային պայմանները հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի նշված ամսաթվերին, որոնք բացառապես մայր գումարի և մայր գումարի տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվները, որոնք պարտքային գործիքներ են և դասակարգված չեն որպես ԻԱՇԿՎ-ը, ենթակա են արժեզրկման փորձության՝ օգտագործելով ակնկալվող վարկային վնասի մոդելը: Այս մոդելի համաձայն, վարկունակության կորուստների պահուստը պետք է ճանաչվի ակնկալվող վարկունակության կորուստներով (ԱՎԿ) հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, եթե գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է դրա նախնական ճանաչումից ի վեր, ապա գործիքի գործողության ժամկետի համար պետք է ճանաչվի պահուստ՝ ակնկալվող վարկային կորուստներով:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես «ամորտիզացված արժեքով» չափվող:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով ամորտիզացված ինքնարժեքով չափված ֆինանսական պարտավորություններ

Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Հաշվի առնելով Ընկերության՝ սնանկ ճանաչված լինելու և գործունեության դադարեցման հանգամանքը՝ հիմնական միջոցների գծով մաշվածության ինչպես նաև ոչ նյութական ակտիվների մասով ամորտիզացիայի հաշվեգրումը դադարեցվել է լուծարման վարույթի մեկնարկին համապատասխան: Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները այլևս չեն չափվում սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածություն կամ ամորտիզացիա, այլ ներկայացված են զուտ իրացվելի արժեքի և հաշվեկշռային արժեքներից նվազագույնով:

Վաճառքի համար պահվող ակտիվների դասակարգման ժամանակ ղեկավարությունը գնահատել է դրանց վաճառքի բարձր հավանականությունը, վաճառքի նախատեսվող ժամկետները և

ակտիվների իրացման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները: Ակտիվների հաշվեկշռային արժեքը համեմատվել է դրանց իրական արժեքի՝ վաճառքի ծախսերը հանած, հետ՝ համապատասխան պահանջների համաձայն:

Պաշարներ

Լուծարման գործընթացի պայմաններում պաշարները գնահատվում են դրանց ակնկալվող իրացման արժեքով՝ նվազեցված վաճառքի և իրացման համար անհրաժեշտ ակնկալվող ծախսերով:

Պաշարների գնահատման ժամանակ հաշվի են առնվում դրանց ֆիզիկական վիճակը, հնացածությունը, իրացման հնարավորությունը և ակնկալվող վաճառքի պայմանները:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչել է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Ձեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

19. Պայմանական պարտավորություններ

Իրավական պարտավորություններ

ՀՀ սնանկության դատարանի 23.04.2024 թվականի որոշմամբ «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊ ընկերության նկատմամբ սկսվել է պարտապանի լուծարման վարույթ՝ հիմք ընդունելով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու հանգամանքը:

Հաշվի առնելով Ընկերության՝ սնանկ ճանաչված և լուծարման փուլում գտնվելու հանգամանքը, առկա դատական գործընթացները և հնարավոր պահանջները կարգավորվում են բացառապես ՀՀ «Սնանկության մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ սնանկության վարույթի և պարտատերերի պահանջների հերթականության շրջանակներում:

ՀՀ սնանկության դատարանի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արամ Խաչատրյանը (վկայական 0026), ով իրականացնում է օրենքով սահմանված լիազորությունները ներառյալ գույքի տնօրինման և լուծարման գործընթացի կազմակերպումը:

Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը չունի

լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության պահանջներին և վստահ է, որ Ընկերությունը չունի շրջակա միջավայրի հետ կապված էական ընթացիկ պարտավորություններ: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությունը դեռ զարգացման փուլում է և օրենսդրության հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները կարող են ապագայում առաջացնել էական պարտավորություններ:

20. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	581,989	*դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին*	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Մասնագիտացված կազմակերպությունների կողմից կառավարվող պարտքեր	5,531,875	*պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին*	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	702,075	*կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին*	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Ստացված վարկեր և փոխառություններ	16,907,129	*Վարկերի իրական արժեքը չափվում է հաշվեկշռային արժեքով, որը մոտ է իրական արժեքին:*	Մակարդակ 3	Կիրառելի չէ